

04 AUG 2010

Հ. Ս. Խ. Հ. Հողմողկոմաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ. ՎԱՐՁ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՍԵՐՍՏՈՒԳՈՂ ԼՍԲՈՐԱՏՈՐԻԱ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

**ՍԵՐՄԱՅՈՒՒ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ
ԽՆԱՄԳԻ ՄԱՍԻՆ**

(Հաստատված է ԽՍՀՄ-ի Հողմողկոմասի
կողմից 1933 թ. 17 հոկտեմբերի)

—

63.3
Հ-25

ԴՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԲՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1934



633
4-25

այ.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՍԵՐՄԱՅՈՒԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ՅԵՎ
ԽՆԱՄԲԻ ՄԱՄԻՆI. ՍԵՐՄԱՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՆԱԽԱՍՏՐԱՍՏՈՒՄԸ ՍԵՐՄԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Սերմերի պահպանման համար նախատեսված պահեստ-
ները, մինչև սերմի ընդունումը, պետք է լրիվ չափով
կարգավորված լինեն. կարգավորման ժամանակ պետք է
հատուկ ուշադրություն դարձնել, փորպեսզի շենքերի նա-
խապատրաստումը կատարվի համաձայն ստորև հիշված
պահանջների:

§ 1. ԿՏՈՐ յեվ առատադ—կտուրը պետք է լինի
մթնոլորտային տեղումների համար անթափանցելի և պետք
է շինված լինի հնարավորին չափ կրակին դիմացող և
ջերմությունը դժվար անցկացնող նյութից: Թիթեղյա
ծածկն ամրացվում է—փռվում տախտակների վրա կամ
շինվում է բարձր, փորպեսզի սերմերը պահպանվեն տա-
քանալուց:

Կաթոցից և արագ տաքանալուց պահպանելու համար,
առատադը շինվում է խիտ (առանց սվաղի): Զրատար
խողովակները պետք է պահվեն կանոնավոր միճակում, իսկ
անձրևաջրերը հեռացվում են առվակների միջոցով: Կտու-
րի զրուկյան նկատմամբ սահմանվում է հատուկ հակո-
ղություն և նկատված դեֆեկտներն անմիջապես պետք է
վերացվեն:

Լեզվ. խմբագիր՝ Ռ. Յեռայան

Սրբազրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնվել է արտադրության 1934 թ. դեկտեմբերի 7-ին:

Ատորադրվել է տպելու 1934 թ. հոկտեմբերի 14-ին:

Թույլատրված է գլավիտի լիազոր № 300

Հրատ. № 140, տիրաժ 2000, Պատվեր. № 591

§ 2. Պատեր յեվ լուսամուսներ—պատերը պետք է լինեն պինդ, սպիտակեցրած կրով, առանց ձեղքերի:

Քարի շենքերում պատերի ստորին մասը, սերմերի դարման բարձրությամբ, տախտակվում են, ծածկվում են չոր տախտակներով կամ ֆաներկայով:

Լուսամուտներն (պետք է շինվեն պատերի վերին մասում) ամրացվում են յերկաթյա ձողերով ու մետաղյա ցանցերով թռչուններից պաշտպանելու նպատակով:

Արևիկող լուսամուտների ապակիները ծածկվում են կավիճով կամ դրսից պաշտպանվում են ծածկոցներով:

§ 3. Հասակ յեվ քնկիւսակ—հատակը պետք է լինի ամուր, դիմացկուն և հարթ, առանց անցքերի, հողի մակերեսից մի փոքր բարձր սյուների կամ հիմքի վրա շինված:

Ընդհատակը մաքրվում է աղբից և պահվում է պահանջված մաքրությամբ: Ընդհատակի բացակայության դեպքում, մաքրելու և ողափոխելու նպատակով հատակը մասնակի բացվում է (հանվում են տախտակները): Ասֆալտի, ցեմենտի կամ քարե հատակ ունեցող պահեստներում սերմերը կույտերով պահելու դեպքում, հատակն անպայման ծածկվում են չոր տախտակով:

§ 4. Ողափոխություն—արհեստական ողափոխություն կարելի չէ ստեղծել, ունենալով:

ա) Կրկնակի (ներքին վանդակապատ) դռներ և լուսամուտներ պահեստի հակառակ կողմերում (ոդի հոսանք ստեղծելու համար):

բ) Յերգիկներ, ոդանցքներ, լուսամուտներ վերին և ստորին մասերում, վորոնք պետք է լինեն ցանցապատ՝ կոցողներից պաշտպանելու համար և ունենան փակիչներ՝ ոդի հոսանքը կանոնավորելու համար: Լուսամուտները պետք է ունենան ապակիներ՝ սերմերը տեղումներից (անձրև, ձյուն) պաշտպանելու համար:

գ) Խոնավ և թաց հատիկներ ունենալու դեպքում,

անմիջապես սերմակույտերի մեջ շինվում են ուղղահայաց և հորիզոնական խողովակներ, վորոնց մի ծայրը հանվում է կույտից դուրս:

Խողովակները շինվում են տախտակից. խողովակները պետք է ունենան բարակ ցանցով ծածկված անցքեր: Տարածությունը խողովակների մեջ 1—1,5 մետր. խողովակների տրամագիծը մոտավորապես 20×20 սմ:

դ) Զակրոմների, շտաբեկների ռացիոնալ դասավորում, թողնելով նրանց մեջ անհրաժեշտ միջանցքներ:

§ 5. Մաքրության պահպանումը սերմապահեստում յեվ պալեստի վնասումների պեմ—սերմերն ընդունելու նախորդակին, պահեստները սերմերից ազատելու ժամանակ և հետագայում պարբերաբար կատարվում է շենքի մաքրումը:

ա) Հեռացվում են սերմերի մնացորդը և աղբը՝ դակրոմներից, մեքենաներից և ընդհատակից, հատուկ ուշադրություն դարձնելով անկյունների ձեղքերի վրա, վորտեղ սովորաբար հավաքվում է բավական քանակությամբ աղբ և սերմեր:

բ) Սրբվում են առաստաղը, պատերը, գերանները, սանդուխդները և անցքերը: Սրբելուց հետո, ախտահանման նպատակով, ցանկալի չէ ֆորմալինի լուծույթում թրջված սրբիչով (1 մաս 40 % ֆորմալին 200 մաս ջրի մեջ) սրբել շենքի պատերը:

գ) Մաքրվում են դռները, սերմադուր մեքենաները՝ 5—10 րոպե կատարել ալխատեցնելով:

դ) Սմբողջ շենքը, ընդհատակը, տարան, բրեզենտները հիմնովին ողափոխվում են և չորացվում:

ե) Կատարվում է շենքի զեզինֆեկցիա և զեզինսեկցիա: Մեքենաները և տարան նույնպես լինթարելվում են զեզինֆեկցիայի, վորի համար ամենից լավ է գործադրել ֆորմալինը. զեզինֆեկցիայից հետո կատարվում է շենքի

դեղինակցիան նավթա-կրային եմուլսիայով, փորը գործադրվում է միայն դատարկ շենքերում:

դ) Աշխատանքներից հետո շենքն ավելվում է և աղբը հավաքվում է արկղի կամ տոպրակի մեջ:

Աղբը, սերմատուներից հետո մնացած մասերը (մանավանդ փաստառուներով վարակված) անմիջապես պետք է պահեստից հեռացնել: Սերմերի հետ միասին չի կարելի պահել շուտ հրդեհվող և հոտավետ (նավթ, ձյութ և այլն) նյութեր:

Սերմապահեստներում ամբարային փաստառուների և կրծողների դեմ պետք է տարվի անընդհատ պայքար: Այդ նպատակի համար անհրաժեշտ է հատուկ պայմանադիր կնքել Պաշտ-ավիոքիմի և ՄԻՍ-ի հետ, փորպեպի վերջիններս ունենան անընդհատ հսկողություն և կազմակերպեն պայքար նրանց դեմ:

II. Ս Ա Ր Ք Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

§ 6. Սերմզոդ մեքենաներ—սերմապահեստները պետք է ապահովված լինեն համապատասխան սերմզոդ մեքենաներով, փորոնք սերմերը ընդունելու պահին պետք է լինեն վերանորոգված, մաքրված աղբից և սերմերի մնացորդից, յենթարկված դեղինֆեկցիայի և ապահովված համապատասխան մաղերով:

§ 7. Զակրումներ—սերմապահեստները պետք է ապահովված լինեն զակրումներով (բաժանմունքներով), փորոնք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին:

ա) Պատերը պետք է լինեն խիտ՝ առանց անցքերի:

բ) Հեռավորությունը առաստաղից և բանփորական միջանցքներից փոշ պակաս 1—1,5 մետրից:

գ) Հատիկը խոնավ լինելու դեպքում պետք է ունենան ոգափոխման խողովակներ:

§ 8. Տեխնիկական ինվենտար յեվ նյութեր—սերմ-

պահեստները պետք է ապահովված լինեն՝ 1) կշեռքներով, 2) տարայով, (բանջարանոցային կուլտուրաների, խոտաբույսերի սերմերի համար), 3) խսիրներով, շպազատով, բրեզենաներով՝ սերմերի չորացման համար, 4) տախտակներով և այլ ինվենտարով (բահեր, ավելներ, սալակներ և այլն):

Սերմերի նկատմամբ սխտեմատիկ հսկողություն ունենալու և նրա փորակը փորոշելու համար պահեստը պետք է ունենա՝ 1) պուրկա լիտրանոց կամ $\frac{1}{4}$ լիտրանոց, 2) ամբարի շշուպ (կոնուսաձև), 3) պարկի շշուպներ, 4) ջերմաչափ՝ հատիկի ջերմաստիճանը փորոշելու համար, 5) ջերմաչափ՝ ողի ջերմությունը փորոշելու համար, 6) շտանգներ-ձողեր:

§ 9. Գրեք, ֆուրեք, փաստադրքեր, յարլիկներ—սերմացուի շարժման և դրության հաշվառման, սերմ պարտյայի ձևակերպման համար, ամեն մեկ մթերոդ կես պահեստ պետք է ունենա. 1) պահեստի գիրք կամ այլ տեսակի հաշվառում՝ սերմերի ընդունման և հանձնման մասին, 2) սերմացուի դրությունը արձանագրող մատյան, 3) զակրումների և շտաբեղների յարլիկներ, 4) բավական քանակությամբ սորտ վկայականների, տեղեկանքի բլանկներ, յարլիկներ սերմապարտյաների ձևակերպման և մարկիրովկայի համար, հրահանգ սերմերի ընդունման, պահպանման, հանձնման և զնահատման մասին:

§ 10. Լուսավորություն—նորմալ աշխատանքն ապահովելու համար, բացի բնական լույսից (լուսամուտներ), պահեստները պետք է ապահովված լինեն արհեստական լույսով—ելեքտրական լույս, լապտերներ և այլն:

§ 11. Հատանդեհադիս յեվ քնդհանուր պահպանություն—սերմապահեստն անպայման պետք է ապահովված լինի հակահրդեհային ինվենտարով (նասոսներ, ջրով լի տակառներ, հրջջ բալոններ, դույլեր և այլն): Պահեստի ընդհանուր հսկողությունը կատարվում է հատուկ մարզու-

միջոցով, վերին արվում են համապատասխան հրահանգներ և պատասխանատու դարձնում շենքի անվտանգության, զբոսների, կողպեքների անձեռնմխելիության համար:

III. ՊՆՃԱՆԱՆ ԿԱՐԳԸ

Սերմացուն պահեստներում կարող է պահվել՝ ա) պարկերի մեջ շտաբեղներով, բ) կուլտուրով-ոռոսիպ՝ հատակի վրա, զակրոմներում:

§ 12. Պարկերի կամ տրիկների մեջ, կրեմ կանոն, պահվում են՝

ա) Բանջարա-բուստանային բույսերի, խոտաբույսերի և միջնատու բույսերի սերմերը:

բ) Այլ կուլտուրաների մանր և թափվող սերմերը (խաշխաշ, ծխախոտ և այլն):

գ) Արտահանվող (էքսպորտի) սերմերը:

դ) Առանձնապես թանկարժեք զեֆիրիտային կուլտուրաների և սորտերի սերմապարտյաները:

ե) Այլ կուլտուրաներ՝ պահեստում տեղ չլինելու դեպքում: Մանր և թանկարժեք սերմերը (յերեքնուկ, առվույտ, խաշխաշ, կաղամբ և այլն) պահվում են կրկնակի պարկերի մեջ:

Սերմերին հատկացված պարկերը պետք է լինեն մաքուր, չոր, նախորոք ախտահանված, վնասատուներով չվարակված, ազատ այլ սերմերի մնացորդներից: Զի կարելի ոգտագործել այն պարկերը, վորոնք զրանից առաջ զբաղված են յեղել շաքարով, աղով և քիմիական պրեպարատներով:

§ 13. Սերմեր ստացում պահելու դեպքում անհրաժեշտ է ապահովել.

ա) Նորմալ ոգափոխությունը և ոգափոխության կառուցվածքի հնարավորությունները:

բ) Պահեստի պահասությունների վնասակար ազդե-

ղեցություն չեղարացումը սերմերի վրա (խոնավ պատեր, հատակ, տանիքի տաքացում և այլն):

գ) Պահվող սերմապարտյաները աղբոսվելուց և խառնվելուց:

դ) Պահանջվող խնամքը սերմերի նկատմամբ (շերմաառիճանի և խոնավության վորոշումը, միջին նմուշի ընտրում և այլն), սերմապարտյաների ազատ շարժումը. (ընդունում, առաքում, վերամշակում և այլն):

ե) Հեշտ և հարմար հաշվառում:

§ 14. Շտաբեղների դարում—շտաբեղները դարսելու ժամանակ անհրաժեշտ է պաշտպանել հետեյալ պայմանները.

ա) Շտաբեղում պարկերը դարսվում են ուղիղ, բերանները դեպի ներս, յերկու կամ 3-ական պարկ, հորիզոնական շաքերով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն պարտյաները, վորոնք յենթակա յեն մարկիրովկայի (նշանակման) կամ վորոնցից պետք է նմուշ վերցնել, դարսվում են առանձին՝ բերանները դուրս, վորպեսզի հնարավոր լինի դիտողություն կատարել:

բ) Շտաբեղներն ամուր, կայուն պահելու և լավ ոգափոխման համար շաքերի միջև (ամեն 2—3 շաքերի) դրվում են չոր և բարակ տախտակներ կամ հարթ ձողեր, իսկ պարկերի տակ, հատակի վրա, յեթե վտանգ կա խոնավանալու, (բետոնե, ասֆալտե, քարե, կավե հատակ), դնում են տախտակներ:

գ) Միջանցքների տարածությունը շտաբեղների, շտաբեղների և պատերի միջև պետք է լինի վոչ պակաս 0,5—1 մետրից:

դ) Շտաբեղների յերկարությունը կարող է լինել անորոշ, իսկ լայնությունը 2 պարկից վոչ ավել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Շտաբեղների յայնությունը կարելի յե մեծացնել միայն այն ժամանակ, յերբ պահեստի տարածությունն անբավարար է, բայց այն դեպքում միայն, յերբ սերմերն չոր են և միջին նմուշ վերցված է:

2. Բարձր շտաբեղներով չպետք է դարսել թարմ և բարձր խոնավություն ունեցող սերմերը:

Հակրոմների բացակայութեան դեպքում և սերմերը խոնավ պատերից մեկուսացնելու նպատակով, թուլյատրվում է սերմերի պահպանումը «հորերում», վորի պատե-
րը կազմված են նույն սորտի սերմերով լցված պարկե-
րից: Պատերի հաստութիւնը 2 պարկից պակաս չպետք է լինի:

§ 15. Շաքելների յեվ կույսերի բարձրությունը սերմ-
պահեստներում—նորմալ խոնավութիւնն ունեցող և նոր-
մալ պայմաններում պահվող սերմացուն փշանալուց պաշտ-
պանելու համար հանձնարարվում է զարմածքի հետևյալ
բարձրութիւնները:

Կուլտուրայի անունը	Տարվա յեղանակ			
	Ցուրտ		Տ ւ ը	
	Պարկերի զարմածքի բարձրութիւնը	Կուլտ մետր.	Պարկերի զարմածքի բարձրութիւնը	Կուլտ մետր.
Հացահատիկներ (տաբեկան, ցորեն, գարի և այլն)	12	3,5	8	2,5
Լոբազգիներ (սիսեռ, լոբի)	10	3	8—6	2,0
Ֆեղեպտացորենի հատիկ, վիկա	8	2	4	1
կոզրերով	8	3	4	1,5
Բրինձ	6	2,0	4	1,5
Արեածաղիկ	8	4	5	1,5
Վազ	8	2	2	1
Կանեփ	5	1	4	0,7
Զմերուկ, սեխ, վարունգ, կաբաչիկ, գաղար, բաղկ, սալաթ, շալինառ և ամսառ	6	—	4	—
Կաղամբ, բազրլտն, պղպեղ, շաղգամ, սոխ, սև- գերեխ, պետրուշկա	4	—	3	—
Ճակնգեղ սեղանի, կերի, հառկավոր խոտաբույ- սեր (տիմոֆեյեկայից զատ)	10	3	8	1,5
Յերերնուկ, առվույց, տիմոֆեյեկա	6	—	4	—

Յեթե պահվող սերմերն ունեն բարձր խոնավութիւն
և բարձր աղբոսութիւն (մոլախոտերի սերմերով),

հիշված նորմաներով պահպանումը թողնվում է պատաս-
խանատու անձանց հայեցողութեանը: Պահպանման ձեերը
կարող են փոխվել՝ նայած պահեստի տեխնիկական հար-
մարութիւններին, սերմերի խոնավութեանը, սերմերի և
արտաքին ողի ջերմաստիճանին, տարվա յեղանակին:

Առանձին դեպքերում (որինակ Ժամանակավոր պահ-
պանման կամ պահեստի ծանրաբեռնվածութեան հետևան-
քով) թուլյատրվում է այդ նորմաների բարձրացումը պա-
հեստի վարչութեան հայեցողութեամբ և պատասխանա-
տութեամբ, յեթե դա սերմերի փշացում չի առաջացնի:
Այդ դեպքում անհրաժեշտ է կիրառել բոլոր այն պայ-
մանները, վորոնք կապահովեն սերմերն ինքնաջերմացու-
մից (սերմերի չորութիւն, սերմերի և արտաքին ողի
ցածր ջերմաստիճան) և պետք է ուժեղացնել հսկողու-
թիւնն ու խնամքը:

IV. ՍԵՐՄՊԱՐՏՅԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՅԵՎ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 16. Նախապատրաստումը սերմերի ընդունման հա-
մար—սերմացուի ընդունման նախորդակին պահեստի վա-
րչութիւնը կամ պահեստապետը պետք է ստանան իրենց
կազմակերպութիւնից հետևյալը՝

ա) Մթերման և հանձման կոնտրոլ թվերն ըստ կուլ-
տուրաների և սորտերի, ցույց տալով առանձին դեֆիցի-
տային սորտերը:

բ) Դասավորման, դոկումենտացիայի, պահպանման և
խնամքի վերաբերյալ հրահանգներ:

գ) Բավարար քանակութեամբ սորտ վկայականների,
ընդունման անդորրագրերի բլանկներ: Ստացված նյութերի
հիման վրա պահեստի վարչութիւնը՝ պատասխանատու
պահեստապետի հետ միասին, կատարում է հետևյալը.

ա) Մշակում է սերմերի ընդունման և դասավորման

պլանը՝ հաշվի առնելով պահեստի տարողութիւնը, ընդունման և հանձնման ժամկետները: Պահեստի տարողութիւնը վորոշվում է նրա ոգտակար մակերեսի լայնութիւնը, յերկարութիւնը և բարձրութիւնը հափելուց հետո. ստացված յերեք թվերը բազմապատկելով, մենք վորոշում ենք պահեստի տարողութիւնը, մեկ խորանարդ մետրի տարողութիւնը մոտավորապես հետևյալն է:

Յորեն	7,5	—	8 ցենտներ.
Վարակ	5	—	»
Գարի	5	—	»
Կորեկ	7,5	—	»
Վուշ	6	—	»
Յեղիպտացորեն	7,3	—	»
Տարեկան	7	—	»
Արևածաղիկ	3,4	—	»
Արև. յուղատու	4,1	—	»

բ) Պարզում է սերմպահեստի տեխնիկական դրութիւնը, սերմացուն յերկար ժամանակ պահելու համար հարմարութիւնները, սարքավորումը և վերջինիս դրութիւնը, ձեռք առնելով միջոցներ վերացնելու այն բոլոր բացերը, վորոնք կարող են ազդել սերմերի վորակի և գոտասորտային (խառնվելուց) ցանքային հատկութիւնների իջեցման վրա:

գ) Վարակված հատիկի և սերմպարտյաների վերամշակման համար առանձնացվում է մեկուսացած շենք:

դ) Սերմպահեստների տարածութիւն 50/0-ը թողնվում է ազատ՝ սերմ չբրացնելու, պարկերը տեղափոխելու և պահպանման ընթացքում այլ գործողութիւններ կատարելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հիշված ազատ տարածութիւնը չլինելու դեպքում, անհրաժեշտ է նախորդ պատրաստել բավարար քանակութիւնը չոր տախտակներ, բրեզնտներ և այլն՝ խոնավ, ջերմացող կամ աղբոտված սերմերի վերամշակման համար:

ե) Համարակալում է առանձին պահեստները, զակրոմները, հորերը:

§ 17. Սերմերի բնորոշումը—սերմացուի ընդունման ժամանակ պետք է դեկավարվել հետևյալ կանոններով.

ա) Տեղակավոր սերմեր հանձնելիս, հանձնողը պետք է ներկայացնի Պետսերմֆոնդի և ՄՏ Կայանի ֆոնդի համար վկայական կամ սահմանված ձևի տեղեկանք ապրանքա-սորտայինի համար: Վկայականը պետք է ունենա տրվյալներ թե զոտասորտութիւն և թե ցանքային հատկութիւնների մասին:

բ) Սերմպարտյաներն իրենց սորտային և ցանքային հատկութիւններով պետք է համապատասխանեն Միութենական ՀժԿ-ի ստանդարտներին (ՈՍՏ) և կոնդիցիոներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սահմանված նորմաներից շեղում թույլատրվում է միայն Միութենական ՀժԿ-ի հատուկ թույլատրութիւն դեպքում:

գ) Վերևում հիշված պահանջները հանձնողի կողմից չկատարելու դեպքում, որինակ փաստաթղթերի բացակայութիւն, ցանքային հատկութիւնների մասին տեղեկութիւն չլինելու դեպքում և այլն, ընդունողը հետևյալ կերպ է վարվում. 1) յեթե հանձնվում է պետսերմֆոնդին պատկանող դեֆիցիտային սորտ առանց հիշված փաստաթղթերի և պահեստում կա ազատ տեղ, սերմացուն՝ ժամանակավորապես, մինչև պաշտոնական փաստաթղթերի ստացումը, դարսվում է առանձին. իսկ հանձնողը պարտավորվում է ներկայացնել պահանջված փաստաթղթերը յերեք օրվա ընթացքում. 2) սերմացուն, վոր չի ուղեկցված սորտային վկայականներով, դարսվում է իբրև չափային. 3) այն սերմացուն, վոր չունի տվյալներ ցանքային հատկութիւնների մասին, զնահատվում է աչքի չափով և ըստ այնմ էլ ընդունվում է և դասավորվում պահեստում: Այդ

գեաղքում հանձնողի ներկայութեամբ վերցվում է միջին նմուշը, իսկ վերջնական հաշվարկումը կատարվում է առաջիկի արդյունքներն ստանալուց հետո:

Ընդունվող սերմապարտիաները ճիշտ գնահատելու համար, ընդունողը վերցնում է միջին նմուշը համաձայն ՀԺԿ-ի կանոնների, հետևյալ գեաղքերում՝ 1) բոլոր գիմազրկվող պարտյաներից, յեթե նրանք լցվում են լոբր հորեր, զակրոմներ և բոլոր այն պայմաններում, յերբ հետադայում պահպանման ընթացքում հնարավոր չի ճիշտ կերպով միջին նմուշն ընտրել:

2) Բոլոր այն պարտիաներից, վորոնք չունեն փաստաթուղթ կամ կասկածելի յեն, վոր ցանքային հատկություններն իրոք համապատասխանում են վկայականի մեջ ցույց տրված տվյալներին:

§ 18. Պարսյանների դասավորումը—ստացված սերմապարտյաները պահեստում տեղավորվում են համաձայն իրենց վորակային փաստաթղթերի:

ա) Ըստ նշանակման (պետտորտֆոնդ, ՄՏԿ ֆոնդ, ապրանքա-սորտային, սերմբրոնյա, շարքային):

բ) Նշանակման սահմաններում ըստ փոփոխակների:

գ) Փոփոխակների սահմաններում ըստ զտասորաության կարգերի:

դ) Զտասորաության կարգերի սահմաններում ըստ ցանքսային հատկությունների դասերի (1—2 դաս, արտադասային):

Կոնդիցիոն և վոչ կոնդիցիոն սերմապարտյաների խառնումը միմյանց կատեգորիկ կերպով արգելվում է:

Մերմի ղեկավարյալ կամ չարամիտ կեղծումը (կադամբը—գոնգեղով, սևուկով, սեղանի ձախնդեղը—կերի ձախընդեղով և այլն) հետապնդվում է:

Կոնդիցիոն սերմերից առանձին դարավում են հետևյալ պարտյաները:

ա) Ընդունված համաձայն § 17-ի առանց վորակային փաստաթղթերի կամ լրացուցիչ անալիզ պահանջող: Բ) Լրացուցիչ վերամշակում պահանջող (գտում, ախտահանում, չորացում և այլն):

դ) Հին բերքից և ինքնաշերմացման յենթարկված:

զ) Հիվանդություններով և ամբարային փաստաթուղթներով վարակված: Վնասատուներով վարակված սերմերը—համաձայն վարակվածության աստիճանի, բաժանվում են յերկու խմբի. թույլ վարակված և միջակ վարակված: Ուժեղ վարակված սերմերը պահպանման համար չեն ընդունվում: Վնասատուներով վարակված սերմերը յենթարկվում են դաման և ախտահանման, ստացված փացորդներն անմիջապես հեռացվում են:

Մրիկով վարակված սերմերը դասավորվում են ըստ վարակվածության աստիճանի (տեսաղը և աստիճանը սահմանված է վորակային փաստաթղթով):

Նմբեր ըստ վարակվածության աստիճանի	Մրիկով վարակված բույսերի թիվը	Ցորենի սերմի մրիկով վարակվածության աստիճանը վորոշված կոմբինիրով ժանի սեթողով
1 խումբ	0	0 սպոր
2 >	0,10% մինչև 1,00%	Մինչև 15 սպոր
3 >	1,0% ից բարձր	15 սպորից ավել

Ախտահանումը պետք է կատարել միայն ցանքսային հատկությունները հաստատող փաստաթուղթն ստանալուց հետո, յերբ կպարզվի, վոր տվյալ պարտյան համապատասխանում է ստանդարտներին և կոնդիցիաներին, վորովհետև նախորդ կատարված ախտահանումը հնարավորություն չի տա, մի կողմից՝ կատարելու լրացուցիչ գտում և մյուս կողմից՝ փացորդներն ոգտագործելու այս կամ այն նպատակի համար:

Բացի այդ, վերջնականապես խոտանված պարտյա-

ներն ըստ ցանքսային հատկութիւններէ ախտահանումից հետո չեն կարող ոգտագործվել պարենի կամ կերի համար:

Վոչ կոնգիցիոն սերմերի ախտահանումը թույլատրվում է միայն այն դեպքում՝ յերբ պարտյան չի կարելի կոնգիցիաներին հասցնել, բայց թույլատրվում է ցանքի համար, յեթե կա Միութենական ՀԺԿ-ի թույլտվութիւնը:

§ 19. Միջոցառումներ զսանտրսութիւնն ապահովելու համար—մի շարք կուլտուրաների և սորտերի դասափորման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ըստ այն միջոցառումները, փորոնք կապահովեն տարբեր կուլտուրաների և սորտերի պատկանող սերմերը միմյանց հետ թափումից և ազդեցութիւնը:

ա) Մի սորտը դարձել պահեստի մի տեղում (կից շտաբներ, զակրոմներ):

բ) Նույն պահեստում միևնույն կուլտուրայի մի քանի սորտեր տեղափոխելու դեպքում, անհրաժեշտ է նրանց միմյանցից բաժանել շտաբներով, (փորոնք զբաղված են այլ կուլտուրայով) զակրոմներով, թույլ չտալով միմյանցից դժվար անջատվող կուլտուրաների կից դասավորումը (տարեկան և ցորեն, դարի և ցորեն և այլն):

գ) Տարբեր կուլտուրաներով զբաղված կից զակրոմները լրիվ չեն լցվում, թողնելով 15-ի չափ ազատ տեղ:

§ 20. Արտադրող սնտսութիւնում սերմերի դասավորումը—տնտեսութիւնում բերքի կախումից հետո սերմերն ընդունելիս դասավորումը կատարվում է հետևյալ պայմաններում.

ա) Հիմնվելով տնտեսութիւնում յեղած սորտահանուման փաստաթղթի ապրոքացիայի տրձանագրութիւն տվյալների վրա, տեղափոխում են սերմերն ըստ դասափորմութիւն կարգերի:

բ) Դասավորման ժամանակ յեթե լարտապար անա-

լիզի տվյալները բացակայում են. ազդեցված և խոնավ պարտյաները սերմերի ընդհանուր զանգվածից պետք է առանձնացվեն:

զ) Հիվանդութիւններով և ֆուսարիոմներով վարակված սերմերը՝ համաձայն սորտահանուման փաստաթղթերի տվյալների, առանձնացվում են և առանձին էլ պահվում:

§ 21. Պարսյաների մարկիրովկան—պահվող բոլոր սերմապարտյաները թե արտադրող տնտեսութիւնում և թե մթերող կետերում պետք է յենթարկվեն մարկիրովկայի:

Մարկիրովկան կատարվում է ամեն մեկ զակրոմի, շտաբերի վրա յարկիկներ կամ տախտակի կտոր կախելով. յարկիկները վրա նշանակվում են հետևյալ տեղեկութիւնները. պարտյայի համարը, կուլտուրա, սորտ, դասափորմութիւն կարգը, մաքրութիւն դասը, քաշը, տեղերի քանակը (յեթե տարայի մեջ է), փորտեղից են ստացվել սերմերը, շրջան (կազմակերպութիւն) և սերմերի զրութիւնն ըստ խոնավութիւն:

Պարկերի մեջ պահվող թանգարժեք սերմերի, ինչպես, որինակ, բանջարանոցային կուլտուրաների, կերի արմատապտուղների և այլ կուլտուրաների դեֆիցիտային սորտերի նկատմամբ մարկիրովկան կատարվում է հետևյալ ձևով. ամեն մեկ պարկի վրա կախվում է յարկիկ, պարկի մեջ գրվում է ետիկետ, միջին նմուշը վերցնելու մասին յեղած կանոններում նշված ձևով:

§ 22. Անմացուի ընդունումը, դիտողութիւնը յնվ խնամքը—կատարվում է պահեստապետի միջոցով, փորն անցել է հատուկ դասընթացներ: Պահեստապետը պատասխանատու է սերմացուի սորտային և ցանքսային հատկութիւնների զրութիւն և պահպանման համար և իր աշխատանքի ընթացքում ղեկավարվում է այս հրահանգով:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, փոր



3627 1007 31370

յերկար պահելու կամ զանազան ուղեւորների յենթարկելու դեպքում՝ առանձնապես անկայուն են հանդիսանում սերմերի հետեյալ պարայաները.

ա) Թարմ (նոր հավաքած, վորոնք դաշտային պայմաններում չեն անցել լրիվ հասունացումը, մասնավորապես կոմբայններով հավաքվածները բարձր խոնավությամբ) և ընդհանրապես նորմալից բարձր խոնավություն ունեցող կամ առաջներում ինքնաջերմացման յենթակա սերմերը:

բ) Ստանդարտներով և կոնդիցիաներով նախատեսված նորմաներից բարձր աղբուկված սերմերը:

Հիշված սերմապարայանների փչացումը կանխելու համար, անհրաժեշտ է անմիջապես յենթարկել համապատասխան վերամշակման (տեսակավորում, չորացում և այլն):

Արհեստական չորացում կազմակերպելու անհնարինությունը պահելու, անհրաժեշտ է սերմերը խնամքով դրել, պահել բարակ շերտով (20—50 սմ.), որպիսիք, սառնոցներ և ամենայն ուր հետևել սերմերի դրությանը:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Հիշված կանոններն անհրաժեշտ է առանձնապես խնամքով կիրառել պահպանման ընթացքում այնպիսի անկայուն սերմերի նկատմամբ, ինչպիսին են՝ յգիպտացորենը, սորգոն, սոյան, արախիսը, քունջութը, գերչակը, բրինձը, յուղատու և լոբիացեղ կուլտուրաները:

§ 23. Դիսդրոսիոն— սերմերի սխտեմատիկ դիտողությունը կայանում է վերջինի հոտի, գույնի, ջերմաստիճանի, խոնավության վորոշման, ինքնաջերմացման, վնասատուների և հիվանդությունների հայտնաբերման մեջ:

§ 24. Հոս— նորմալ դրությամբ սերմերն ունենում են կուլտուրային հատուկ թարմ հոտ: Ինքնաջերմացման պրոցեսները սերմացուի մեջ առաջացնում են նեխվածահոտ:

§ 25. Ջերմության յեվ խոնավության վորոշումը— սերմացուի ջերմաստիճանի և խոնավության որոշումը վորոշման համար գործադրվում են յերկաթյա ձողեր 1,5 սմ. հաստությամբ: Կարելի յե յերկաթյա ձողերի փոխարեն գործադրել չոր, կլոր, 3—4 սմ. հաստությամբ փայտե ձողեր:

Ձողերը խրվում են կուլտի ամբողջ խորությամբ, տարբեր կետերում, 2—3 մ. հեռավորությամբ մեկը մյուսից: Վորոշ ժամանակ անցնելուց հետո (1 ժամից վաղ պակաս) ձողերը հանվում են և ձեռքով շոշափելով վորոշվում է նրանց տաքացումը, խոնավացումը կամ քրտնումը, կուլտի տարբեր խորություններում:

Ձողերի խոնավացումը, տաքացումը սովորաբար ցույց է տալիս, վոր սերմերի մեջ սկսվել է ինքնաջերմացումը. միևնույն ժամանակ անհրաժեշտ է հիշել, վոր նոր հավաքված սերմերի մեջ քրտնումը կարող է հետևանք լինել նաև ուժեղ շնչառության և հասունացման պրոցեսների: Ձողերի տեղերը սխտեմատիկորեն փոխվում են, բացառությամբ մի քանի հիմնական— (ստուգող) կետերի, վորոնք թողնվում են համեմատության համար:

Ջերմաստիճանի ավելի ստույգ չափումների համար գործադրվում են պատյանի մեջ հազցված և ձողերի վրա ամրացված ջերմաչափեր: Այդ ջերմաչափերը սերմերի մեջ պահվում են 35—40 րոպե:

Սերմերի նախնական խոնավությունը վորոշվում է շոշափելով, նմուշի առանձին հատիկները առամներով կամ դանակով կտրելով, իսկ խոնավության տոկոսի ճիշտ վորոշումը կատարվում է լաբորատորիայում, վորի համար վերցրած նմուշը տեղավորվում է չոր շշի մեջ, վորը պինդ խցանով ամուր փակվում է, զմռսվում և ուղարկվում լաբորատորիա անալիզի:

Տարալի մեջ պահվող սերմացուի դրությունը վորոշվում է պարկերը շոշափելով և նմուշը վերցնելով:

§ 26. Դիտողությունների գրանցում—դիտողությունների հետևանքի՝ հոտի, ջերմաստիճանի, խոնավություն մասին գրանցվում է վիզիրովկայի մատյանի մեջ, փորը տարվում է գրքի կամ առանձին քարտերի ձևով՝ ամեն մեկ գաղթումի, շտաբելի համար առանձին: Վիզիրովկայի մատյանի ձևը տրվում է կից (հավելված 1-ին):

§ 27. Հեռագրումն ժամանակամիջոցը—հեռագրումն ժամանակամիջոցը վորոշվում է համաձայն ուղի և սերմի ջերմաստիճանի, խոնավություն, կույտերի բարձրություն և սերմերի պահպանման այլ պայմանները:

Նորմալ պայմաններում պահվող սերմերի նկատմամբ որչանաք կերպով պետք է ղեկավարվել հետազոտման հետևյալ ժամանակամիջոցներով:

Սերմերի դրությունն ըստ խոնավության	Տարվա ցուրտ յեղանակին (ջերմությունը 0-ից ցածր է)	Տարվա տաք յեղանակին (ջերմությունը 0-ից բարձր է)
ա) Սահմանված նորմաների սահմաններում	Մեկ անգամ 3 անգամ	5 որը մեկ անգամ
բ) Նորմայից բարձր 10/100-ով . . .	5 որը մեկ անգամ	3 որը մեկ անգամ

Ավելի հաճախ դիտողություններ կատարվում են՝

1) Այն սերմերի նկատմամբ, վորոշ խոնավությունը նորմայից բարձր է ավելի քան 1 տոկոսով, կամ վորոշ յեղանակներին են ինքնաջերմացման:

2) Թարմ և աննպատակ յեղանակին հավաքված սերմերի նկատմամբ:

3) Պահպանման ընթացքում անկայուն սերմերի նկատմամբ, ինչպիսին են՝ յեղիպտացորենը, բրինձը, կանաչի, սորգոն, սոյան, արախիսը, քունջութը և այլն:

Մենորմալ պայմաններում պահված կամ բարձր խոնավություն ունեցող սերմերի ծլունակությունը վորոշվում է մի քանի անգամ: Վերջի հետազոտումը, իբրև կա-

նոն, կատարվում է տվյալ սերմաբույսի ցանկուց առաջ (15 որից վոշ ուշ):

V. ՍԵՐՄԱՑՈՒԻ ԽՆԱՄՔԸ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

§ 28. Խնամքի համար գլխավոր միջոցները հետևյալն են՝ 1) դոտում, չորացում—նպատակ ունենալով հասցնել սերմերը կոնզիցիաներին և կանխել ինքնաջերմացումը, 2) թիով խառնել, երնել, շենքի ձիշտ ողափոխում, շտաբելների վերադասավորում:

§ 29. Սերմերի զտում—սերմազտման ժամանակ պետք է կատարել՝ 1) համապատասխան ընտրություն դոտող մեքենաների և մաղերի, 2) մեքենաների ձիշտ զետեղում և նորմալ արտադրողականություն, 3) տրեյերով կամ այլ բարդ տեսակավորող մեքենաներով վերամշակելուց առաջ, հիշված մեքենաները աղբոտելուց զերծ պահելու համար, անհրաժեշտ է նախորդ սերմերն անցկացնել քամնար մեքենայով:

§ 30 Սերմերի չորացում—չորացումը կատարվում է 1) հատուկ չորանոցներում, 2) բացօթյա:

Չորանոցներում աշխատելիս պետք է ղեկավարվել հատուկ հրահանգով, վոր հրապարակված է 1932 թ. № 64—65 «Զախոտգեոնոյի բյուլետենում»:

Բացօթյա չորացումը կատարվում է.

ա) Զոր և պարզ յեղանակին, բարձր, չոր, աղատ, արևի ճառագայթների և բամու համար հարմար տեղերում:

բ) Սերմերը փռվում են 5—15 սմ. հաստություն ունեցող շերտով (նայած խոնավության) և հաճախ թիչերով խառնվում են:

գ) Արևը մայր մասնելուց 1—2 ժամ առաջ կամ աննպատակ յեղանակի նախորդակին սերմերը հավաքում են շենքի մեջ:

Յեթե չորացնելու ժամանակ սերմերը շատ տաքացել

են, պիտի սառեցնել՝ անցկացնելով քամհար մեքենայի միջով:

§ 31. Շենքի ողավոխում—շենքի ողավոխման ժամանակ պետք է նկատի ունենալ հետևյալը.

ա) Գարնանը ողավոխում կատարվում է վաղ առավոտյան կամ գիշերվա ցրտերի (ալագի) ժամանակ և պարզ ու չոր օրերին:

բ) Ամառը արտաքին ողջ չոր է և տաք, դրա համար ել՝ յեթե սերմերն ունեն ցածր ջերմաստիճան և նորմալ խոնավություն, ողավոխում չի կատարվում. իսկ յեթե սերմերը պարունակում են բարձր խոնավություն—ողավոխումն անհրաժեշտ է:

գ) Աշնանն արտաքին ողջ ցուրտ է և խոնավ, պահեստներն ավելի սառն և պակաս խոնավ: Ողավոխումը կատարվում է միայն չոր յեղանակին:

դ) Ձմեռն արտաքին ողի ջերմաստիճանն ավելի ցածր է և ողն ավելի չոր, քան պահեստներում. ողավոխումը կատարվում է թե ցերեկը և թե գիշերը:

Ողավոխում չպետք է կատարել՝ 1) ամպամած յեղանակին և տեղումների ժամանակ, 2) արտաքին ողի և սերմերի ջերմաստիճանի մեջ յեղած զգալի տատանումների ժամանակ:

§ 32. Շաքիկների վերադասավորում—վերադասավորումը նպատակ ունի կանխելու յերկար ժամանակ միևնույն տեղում մնացած սերմերի ինքնաջերմացումը և փչացումը:

Վերադասավորումը կատարվում է հետևյալ ձևով.

Պարկերը հատակի վրա մի քանի անգամ զրոգվում են, իսկ դարսելու ժամանակ ցածի պարկերը դրվում են վերե, իսկ վերեներ՝ ցած:

Վերադասավորման յենթակա չեն այն շտաբները, փորոնք պահպանում են ձմեռվա ընթացքում ունեցած ջերմաստիճանը:

§ 33. Տախցոյ սերմերի խնամք—ինքնաջերմացման հենց առաջին նշանները յերևալուն պես անմիջապես պետք է կատարել սերմերի սառեցում, ողավոխում և չորացում:

Ողջխներով ջերմացման դեպքում, տաքացած սերմերն անմիջապես անջատվում են և մեկուսացվում առողջ սերմերից: Շտաբելի վորոշ պարկերի մեջ ջերմացում հայտնաբերելու դեպքում, անհրաժեշտ է ստուգել բոլոր պարկերը. առանձնացնելով տաքացող և կասկածելի սերմերով պարկերը, վերջինները վերամշակել վերևում ցույց տրված ձևով:

Տաքացած սերմերը հետագայում չեն խառնվում առողջ սերմերին, պահվում են առանձին՝ բարակ շերտերով փոված: Սրանց վրա սահմանվում է խիստ հսկողություն, վորովհետև կրկնակի տաքացումը (նույնիսկ չորացրած սերմերի նկատմամբ) շատ հաճախ է կրկնվում:

Ջերմացած բոլոր սերմերը վերամշակումից հետո, նախ քան պահեստից ուղարկելը, անկախ նախորդ անալիզների արդյունքից, պետք է ստուգվեն՝ նրանց ծլունակության տոկոսը պարզելու համար:

VI. ՍԵՐՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

§ 34. Ցանքի համար ցանխատարներին արվող սերմերն իրենց ցանքային հատկություններով պետք է համապատասխանեն ստանդարտներին և կոնդիցիոներին:

Վոչ կոնդիցիոն սերմերի բաշխումը թույլատրվում է միայն այն դեպքում, յեթե այդ մասին կա Միութենական Հժկ-ի հատուկ կարգադրությունը: Այդպիսի սերմեր բաց թողնելիս, վորակապես փաստաթղթերի վրա նշվում է, վոր թույլատրված է ավյալ սերմալարայի բաշխումը:

§ 35. Պահեստից ուղարկվող բոլոր սերմալարայանները պետք է ունենան վկայական:

§ 36. Ցանքի համար անպեժ սերմերը պետք է խո-

տանվեն իբրև սերմացու և ոգտագործվեն այլ նպատակների համար:

Աւետիքի դասավորման կտրգը համաձայն զստատեսության կտրգերի

	Զտատեսության տեղանքի բառ կտրգերի			
	1	2	3	4 (բարեկամ)
Յորեն աշնան, ցորեն դարձան, դարի, վար- սակ	100—99,5	99,4—97,0	96,9—95,0	94,9—85,0%
Արեւմտային տիպի	100—99,5	99,4—99,0	98,9—98,0	97,9—80,0 »
» Թաղանթավոր	100—97,0	96,9—95,0	94,9—92,0	91,9—90,0 »
Փաղար կերի	100—90,0	89,9—80,0	79,9—70,0	— —
Նակնդեղ	100—95,0	94,9—85,0	84,9—70,0	— —
Խոտասերմեր	100—95,0	94,9—90,0	89,9—80,0	80,0%-ից ցած

VII. ՍԵՐՄԻ ՄԻՋԻՆ ՆՍՈՒՇԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

37. Ինչ և սերմացւոյան. նրա միջին որինակը յեւ
նմուշը—սերմացւոյան կոչվում է կշռով կամ տեղերի
թվով հայտնի սերմի քանակութիւնը, վորը պատրաստված
է տնտեսութեան կամ կազմակերպութեան կողմից իր սե-
փական ցանքի կամ այլ տնտեսութեան մատակարարելու
համար:

Պարտյան պետք է ունենա ինչպէս ֆիզիքական, նույն-
պէս է փոփոխակային հատկանիշների վկայական:

Սերմացւոյան պետք է լինի հնարավորութեան չա-
փով միատարր իր ծագումով միեւնոյն տարվա, ծրուե-
կութեամբ, ֆիզիքական և փոփոխակային հատկանիշներով
և ստուգելութեամբ:

Սերմացւոյան (վորից վերցված է նմուշ) սմբող-
ջութիւնը, անփաստութիւնը պահպանելու համար պա-
տասխանատու յէ ստուգվող կազմակերպութիւնը, անկախ
այն բանից, կույտով, թէ պարկերում է պահվում սերմա-
ցուն և կամ կնքված է, թէ վոչ:

Միջին որինակ կոչվում է այն մանր սկզբնական-
որինակների միացութիւնը, վորոնք վերցվում են սերմ-
պարայայի զանազան տեղերից վորոշ թվով և կարգով ու
խառնվում են իրար, նախապէս իրար հետ համեմատելուց
և միատարրութիւնն ստուգելուց հետո:

Սերմի միջին որինակը պիտի արտացոլի սերմապար-
այայի բոլոր այն առանձնահատկութիւնները, վորոնք
ընդորոշում են նրա վորակը:

Մեծ սերմապարայանների գնահատման ժամանակ, վեր-
ջիններս բաժանվում են սահմանված մեծութեան, միմյանց
հալատար մասերի, այնպէս կոչված ստուգման միավորնե-
րի, և յուրաքանչյուրից վերցվում է միջին որինակ՝ առան-
ձին անալիզի համար:

Նմուշ կոչվում է սերմի միջին որինակից անջատած
այս կամ այն անալիզի համար անհրաժեշտ քանակութիւն-
ը, վոր վերցվում է համապատասխան գործիքով կամ
ձեռքով տարրեր ձեւերով:

Նմուշի, միջին որինակի և սմբողջ պարայայի մի-
մյանց համապատասխան լինելու համար պատասխանատու
յէ այն կազմակերպութիւնը, վորը վերցնում է նմուշը:

§ 38. Պարայայի նախապատասխանը նմուշ վերց-
նելու նամար. Այն պարայան, վորից վերցվում է նմուշը,
պետք է միանգամայն պատրաստ լինի, այսինքն լինի իր
կազմութեամբ միատարր, զտված, տեսակավորված և ունե-
նա համապատասխան վկայական՝ ծագման և այլ հատկու-
թիւնների մասին:

Նմուշ վերցնող կազմակերպութիւնը կամ հատուկ
հանձնաժողովը՝ ստուգելով պարայայի, վագոնի կամ պարկե-
քի յարկի համարները, պարկերի թիվը, սերմի արտաքին
տեսքը, վորոշում է, թէ պարայան համապատասխանում
է վկայականին և նրա մեջ ցույց տված տվյալներին:

Արտաքին զիտողութեան ժամանակ նկատված բացե-
րը, վորոնք կարող են փառել սերմի պահպանմանը, տեղե-
քը,

ու տեղը վերացվում են (պատուած, թրջված պարկեր և այլն) կամ նրանց մասին նշվում է արձանագրության մեջ:

Խուսափելու համար հնարավոր թյուրիմացություններին, մեկ պարտյան մյուսին չխառնելու, ինչպես և պարտյայի դասավորումը հեշտացնելու համար, սերմի կուլտերը, շտեմարանի բաժանմունքները (закрома) յենթարկվում են կազմակերպության կողմից մարկիրովկայի (նշանակման), ամրացնելով նրանց վրա տախտակի կտորներ-յարլիկներ, վորոնց վրա գրված է լինում պարտյայի մասին անհրաժեշտ տեղեկություններ: Իսկ յեթե սերմացուն պահվում է ամանի-պարկերի մեջ, այդ դեպքում յարլիկը յուրաքանչյուր պարկից կախվում կամ կպցվում է վրան, հերթական համարներով:

Մարկիրովկան (նշանակումը) կատարում է կամ կազմակերպությունը կամ ըստ համաձայնության՝ սերմ-ստացող լաբորատորիան:

Պարկերի դասավորությունը պետք է լինի այնպես, վոր հեշտությամբ հնարավոր լինի յուրաքանչյուր պարկին յարլիկ կպցնել և կամ նրանից սերմի որինակ վերցնել: Սերմը կուլտով պահելու դեպքում անհրաժեշտ է շուրջը մտցնել կուլտի բոլոր մասերը և խորությունները:

§ 39. Սերմից միջին ուրինակ վերցնելը—սերմի միջին որինակ վերցնելու ձևը կախված է սերմպարտյայի դրությունից, նրա վոչ միատարրությունից, պահելու ձևից, պարտյայի մեծությունից և այլն, խստորեն պահպանելով հետևյալ կանոնները.—

Առանձին որինակները վերցվում են շուրջով կամ ծայրահեղ դեպքում ձեռքով, ծրարներով պահվելու դեպքում՝ ամբողջ ծրարներով: Կնքված պարկերի բերանը քանդելը և բաց անելը թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, կազմակերպության համաձայնությամբ, սերմատուգող լաբորատորիայի կողմից, վորից հետո պետք է պար-

կերը նորից կնքվեն սերմատուգող լաբորատորիայի կնքով և այդ մասին պետք է նշել արձանագրության մեջ:

Պարտյան, վորից վերցվում է միջին որինակ, պետք է ունենա վորոշ ընդունված մեծություն. դրանից ավելի լինելու դեպքում պարտյան բաժանվում է մասերի՝ համաձայն պարկերի №-ների կամ կուլտերով պահվելու դեպքում՝ շտեմարանի բաժանմունքների համարների և յուրաքանչյուր մասից վերցվում է առանձին սերմի որինակ: Այդ մասերը, վոր կոչվում են ստուգման միավորներ, պետք է ունենան հետևյալ մեծությունը.—

Ստուգման միավորի մեծությունը	Պարկերով	Կուլտով
Հողահատիկների, ընդեղենների, հացազգի խոտաբույսերի (բացի տիմֆեակայից), տեխնիկական կուլտուրաների և ծառաբույսերի համար	250 պ.	160 ցենտ.
Յերեքնուկի, առվույտի, կտավհատի, տիմֆեակայի համար	100 »	80 »
Բանջարանոցայինների, արմատապտուղների, դեղաբույսերի համար	100 »	80 »
Կորդերով պահվող յեզիպտացորենների համար	—	300 »
Ժանր ամառներով պահվող սերմի համար (մանր թղթի ծրարների և այլն)	1000 »	ծրար

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կուլտով պահվող հացահատիկային սերմերի համար, յեթե պարտյան միատարր է կազմությամբ, ծագումով միևնույն տնտեսությունից և և մի տարվա բերք, ստուգման միավորը կարելի չէ թույլ տալ մեծացնելու մինչև 500 ցենտներ:

Սերմի միջին որինակի մեծությունը կախված է սերմի տեսակից, անալիզի տեսակից և անջատվող նմուշների և նրանց պատճենների թվից (նմուշների մեծությունը աարքեր կուլտուրաների համար տրվում է կից № 1 տախտակում): Նմուշի պատճենը, վորն ունենում է լաբորատորիա ուղարկվող նմուշի մեծությունը, թողնվում է տնտեսությունում:

Գրուհատ-ստուգման նմուշը վերցվում է ընդհանուր որինակից և ունենում է նույն մեծությունը, ինչ լաբորատոր անալիզի նմուշը. ծրարվում է արանձին:

Մանր որինակների թիվը (փորոնցից կազմվում է միջին որինակը) և սերմալարայայից վերցնելու կարգը կախված է սերմալարայայի մեծությունից, նրա խոնավության, փոփոխակային կազմության, աղբոսվածության միատարրությունը պահելու ձևից և փորոշվում է հետևյալ կերպ.—

Մանր ծրարներով պահվող պարայայի որինակները վերցվում են առանձին ծրարներով, թվով —ամբողջ պարտիայի ծրարների 5 տոկոսից փոչ պակաս: Այդ ծրարները դատարկվում են, փորոշվում է նրանց միատարրությունը և այդ խառնուրդից վերցվում է նմուշը, սահմանված մեծությամբ:

Փոքր, մինչև 10 պարկից կազմված պարայայից որինակներ վերցվում են բոլոր 10-ը պարկից, յուրաքանչյուր պարկի յերեսից, մեջտեղից, տակից: 10—50 պարկ լինելու դեպքում՝ յուրաքանչյուր 3-րդ պարկից, 50-ից ավելի դեպքում՝ յուրաքանչյուր 5-րդ պարկից:

Որինակները վերցվում են շշուպով, դարձյալ յուրաքանչյուր պարկի վրայից, մեջտեղից, տակից:

Սերմացուն կույտով պահվելու դեպքում, վարվում են հետևյալ կերպ.—

1. Բարձված սալերից, ավտոներից, ինչպես և փոքրիկ կույտերից, որինակը վերցնում են շշուպով կամ ծայրահեղ դեպքում ձեռքով, փոչ պակաս քան 10 տեղից:

2. Վազաններից և շտեմարանի բաժանմունքներից որինակը վերցվում է՝ վազոնից կոնուսաձև շշուպով, յուրաքանչյուր 10 ցենաներին մեկ որինակի հաշվով, բայց ընդամենը փոչ պակաս քան 15 տեղից:

Այդ տեղերը նշանակելիս պետք է ընդգրկել կույտի բոլոր մասերը—անկյունները, մեջտեղը և շերտի բոլոր խորությունները (տփիկ, մեջտեղը, յերեսը): Ցիլինդրաձև

շշուպներ գործադրելու դեպքում, պետք է որինակը վերցնել 5 տեղից, կույտի ամբողջ խորությամբ:

3. Պորը հորերում պահվող սերմի յերեսից որինակ վերցնելը թույլատրվում է միայն մասովոր որյենտիը գնահատականի համար. այդ նպատակով որինակը վերցնում են յերկաթաձողի վրա հագցրած շշուպով, յուրաքանչյուր 0,5 մետր խորությունից մի շշուպի հաշվով (ուղղահայաց գծով): Սերմ վերցնելու կետերը յուրաքանչյուր անգամ փոխում են՝ ընդգրկելով ամբողջ մակերեսը, բայց փորում շշուպների ընդհանուր թիվը պետք է լինի 20-ից փոչ պակաս:

Յեթե սերմի միջին որինակը վերցվում է սերմացվի գիլուկով վարակվածությունը փորոշելու, կամ կազմակերպության հատուկ պատվերով սերմի մեջ սուր վնասակար մոլախոտների, վնասատուների, մակային հիվանդությունների առկայությունը պարզելու համար, այդ դեպքում սկզբնական որինակները վերցվում են բոլոր պարկերից, անկախ սերմալարայայի մեծությունից:

Այդպիսի սերմալարայաները գտման, ախտահանման, հաղանելիման և այլն յենթարկելուց հետո՝ կրկնակի անալիզ կատարելու համար, սերմի միջին որինակը և նմուշը վերցվում են նույն ձևով, միայն կրկնակի մեծությամբ:

Արբիտրաժի դեպքում, յեթե սերմալարայան մնացել է ամբողջական, միջին որինակը վերցվում է կրկնակի մեծությամբ:

Յեթե սկզբնական որինակները վերցնելիս և միմյանց հետ համեմատելիս պարզվում է պարտիայի մեջ 5 պարկի նկատմամբ փոչ միատարրություն, այդ դեպքում որինակները վերցվում են բոլոր պարկերից: Սերմացուն կույտով պահվելու դեպքում, փոչ միատարրություն հայտարարելիս, սկզբնական որինակների թիվն ավելացվում է սահմանված թվի համեմատությամբ:

Կողբերով պահվող յեգիպտացորենից միջին որինակ

վերցնելու համար 100 ցենտներից վերցվում է 200 կողմ 20 տարբեր տեղերից, յուրաքանչյուր տեղից 10 կողմ, իրար հետևից առանց ընդհատման: Յեթե պարտյան 100 ցենտներից ավելի չէ, այդ դեպքում յուրաքանչյուր մեկ ավելի ցենտներից վերցվում է մեկ կողմ: Վերցված կողմերը խառնվում են և նրանցից կազմվում է նմուշ 20 կողմից:

§ 40. Միջին որինակի յեվ նմուշի կազմելը—վերցված մանր, սկզբնական որինակները դատարկվում են ամեն անգամ մի սպիտակ տարածության վրա, միմյանց համեմատելուց և նրանց միատարրությունը վորոշելուց հետո խառնում են իրար: Խիստ չափով վոչ միատարրություն հայտնաբերելու դեպքում (ըստ դույնի, հոտի, տաքության, խոնավության, աղբոսավածության, վնասատուներով վարակվածության և այլն), միջին որինակից անջատվում են ընդհանուրից տարբերվող որինակները և կազմվում առանձին միջին սրինակ, անջատելով պարտյայից նաև նրանց համապատասխանող պարկերը:

Մանր որինակները փայտի թիյով կամ սերմի բաժանիչով լավ խառնելուց հետո ստացվում է սերմի միջին որինակը: Այս միջին որինակից վերցվում են հարկավոր թվով նմուշներ. այդ թիվը կախված է նրանից, թե ինչ անալիզների համար է վերցվում նմուշը և թե պատճեն թողնվելու չէ կազմակերպությունում, թե վոչ: Խոշոր սերմերի դեպքում նմուշն անջատվում է միջին որինակից սերմի բաժանիչով, իսկ մանր սերմերի դեպքում նմուշը վերցվում է մեջընդմեջ շերտերի ձևով: Նմուշի պատճենը (дубликат) վերցվում է անալիզի յենթակա նմուշի մեծությամբ և թողնվում է կազմակերպությունում, վորտեղ պահվում է մի տարվա ընթացքում:

Նմուշի մեջ գրվում է ետիկետ (յարլիկ) հետևյալ տեղեկություններով սերմաբարայայի մասին. 1) արձանագրության №-ը, նմուշի ընտրման ժամանակը, 2) կազմա-

կերպության, տնտեսության անունը, 3) հասցեն, 4) կուլտուրա, փոփոխակ, 5) գտաստրություն տուկուր, կարգը, 6) քաղը և տեղերի քանակը, 7) պահեստի, դակրոմի, պարտյայի, պարկի №-ը, 8) վորտեղից են ստացված սերմերը: Նմուշը զետեղվում է ծրարի կամ տոպրակի մեջ, վորի մեջ գրվում է նաև ետիկետը, սերմաբարայան բնութագրող տեղեկություններով և ծրարը կնքվում է կազմակերպության կնիքով:

Խոնավությունը վորոշելու համար ուղարկվող նմուշը տեղավորվում է նոր շշի մեջ, խցանով ամուր փակվում և զմռսվում:

Թանկարժեք սերմերի (բանջարանոցային կուլտուրաներ, խոտաբույսեր) պարկերի վրա կախվում կամ կպցվում է ետիկետ հետևյալ բովանդակությամբ՝ 1) կազմակերպության, տնտեսության անունը, 2) կուլտուրա, 3) սորտ, 4) գտաստրության կարգը, 5) քաղը, 6) պարտյայի №-ը, 7) պարկի №-ը, 8) նմուշը վերցնելու ժամանակը, 9) վոր տարվա բերք է:

§ 41. Արձանագրությունը լրացնելու կանոններ—

1. Արձանագրությունը (ձևը տես հավելված № 2) լրացվում է պատճենահան թղթի միջոցով յերեք սրինակից, մի որինակը նմուշի հետ ուղարկվում է լաբորատորիա, մյուսը մնում է պահեստում, յերրորդն ուղարկվում է տնտեսությունը միացնող կազմակերպությանը:

2. Արձանագրության բոլոր սյունյակները պետք է լրացվեն: Առանձնապես կարևոր է ճիշտ տեղեկություններ տալ կուլտուրայի, սորտի, քաղի, պահպանման տեղի, սերմերի զրության և յերաշխիքային ստորագրության մասին:

Այն նմուշների նկատմամբ, վորոնք ուղարկվում են առանց արձանագրության կամ արձանագրությունը չի լրացված § 2-ում հիշված ցուցմունքներով, սերմատուկող լաբորատորիան վկայական չի տալիս:

3. «Դիտողություններում» ցույց ե տրվում նմուշի վոչ ճիշտ ընտրումը (որինակ միայն վերևի շերտերից), սխալ պահպանումը, ջերմացումը, բարձր խոնավությունը, պարտիայի վոչ միատարրությունը և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Բյանկները տպագրելիս պետք է ի նկատի ունենալ, զոր «I, II, III» սյունյակները պետք է լինեն բավական լայն, զորպեսզի հնարավոր լինի ամեն մեկ սերմավարայի մասին տալ անհրաժեշտ տեղեկությունները:

§ 42. Ով ե վեցնում նմուշ — նմուշ կարող են վերցնել հետևյալ անձինք, խստիվ կերպով հետևելով սույն կանոններին.

1. Սերտիֆիկատ ստանալու համար նմուշը վերցնում ե կենտրոնական սերմատուգող լաբորատորիայի տեսուչը, կազմակերպության ներկայացուցչի ներկայությամբ: Արբիտրաժային նմուշը վերցվում ե յերկու շահագրգռված կողմերի ներկայացուցիչների միջոցով:

2. Մնացած դեպքերում նմուշը վերցնում ե կազմակերպության ներկայացուցիչը, սերմի պահպանման համար պատասխանատու անձի կամ ոգրոնոմի ներկայությամբ:

Սուսնաճառատուկ դեպքում (որինակ սերմի փշացման պատճառները պարզելու համար և այլն) կանչում են սերմացուն ստացող կազմակերպության ներկայացուցչին, գյուղատնտեսին, գատական մարմինների ներկայացուցչին և այլն:

§ 43. Նմուշ վերցնելու ժամանակը յեվ կարգը — սերմավարայից նմուշ վերցնում են այն ժամանակ, յերբ վերջինս արդեն վերջանականապես գտված, տեսակավորված ե և պատրաստ հանձնման համար և այն հաշվով, զոր սերմացուի բաշխման մոմենտին և մթերման ժամանակ կազմակերպությունն ունենա բոլոր անհրաժեշտ տվյալները սերմի վորակի մասին:

Տախտակ № 1.

Լաբորատոր անալիզի համար վերցվելիք նմուշի քաշը —
ա) Հասկավոր հացաբույսեր.

Մինչև 40 ցենտ. քաշ ունեցող կամ 50 պարկի մեջ պահվող պարտյայի համար	500 գր.
Ավելի մեծ պարտյայի համար (մինչև կոնտորի միավորի նորմալ չափը)	1600 գր.
բ) Միսեռ	800 գր.
գ) Լոբի, սոյա, վոսպ, վիկ, արևածաղիկ	500 գր.
դ) Յերեքնուկ, առվույտ, ճակնդեղ, սորգո	250 գր.
յե) Վուշ, կանեփ	100—200 գր.
զ) Ջմերուկ, սեխ, վարունգ	100 գր.
ե) Բանջարանոցային մեծ	30 գր.
ը) » մանր	15 գր.

Պահպանման ընթացքում նկատված թերությունները.....

Նմուշները ղեկավարված են..... մեջ և ուղարկ-
(տարա)

ված են անալիզի.....

սերմ ստուգող լաբորատորիան:

Նմուշների յերկրորդ որինակը կնքված.....

կնիքով, թվով..... հատ թողնված են պահեստում և պահ-
վում են այն դեպքի համար, յեթե պահանջվի կրկնակի անալիզ
կատարել:

Նմուշը վերցրել և, համաձայն ստանդարտ մեթոդիկայի, վերը
ապահովում և նմուշի և սերմավարտյայի (վորից վերցված և
նմուշը) միանմանությունը.....



<< Ազգային գրադարան



NL0282092